

## **Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանն այցելել է Վերին Պտղնի և Պտղնի բնակավայրեր, լսել բնակիչների խնդիրները**

Վերջերս Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանին էին դիմել Կոտայքի մարզի Վերին Պտղնի բնակավայրի բնակիչները՝ բարձրաձայնելով Երևան-Սևան մայրուղու հարևանությամբ վերգետնյա անցումի կառուցման անհրաժեշտության մասին:

Բնակիչները նշել էին, որ նշված ճանապարհահատվածի երթևեկությունը բավականին խիտ է և բազմիցս վրաերթեր ու ավտոպատահարներ են տեղի ունեցել՝ ընդհուպ մինչև մահվան ելքերով:

Բնակիչները ներկայացրել էին իրենց առաջարկները, և քննարկել էինք լուծման տարբերակներ:

Նմանատիպ խնդրի առաջ են կանգնել նաև Պտղնի բնակավայրի բնակիչները: Վերջիններս էլ ահազանգել են, որ Երևան-Սևան մայրուղու՝ Ճանապարհային ուստիկանության Աբովյանի հենակետի (Գայի պոստ) հարակից հատվածում լուսացույցի տեղադրման անհրաժեշտություն կա՝ կրկին մատնանշելով անվտանգ երթևեկի կազմակերպման անհրաժեշտությունը:

Երկու բնակավայրերի բնակիչների խնդիրները տեղում հասկանալու և լուծումներ գտնելու նպատակով մարզպետ Ահարոն Սահակյանը Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի, խորհրդականիս՝ Մհեր Գևորգյանի, քաղաքաշինության վարչության պետ Հրաչ Վարդանյանի հետ այցելել են նշված բնակավայրեր և անձամբ զրուցել բնակիչների հետ, լսել նրանց մտահոգությունները, դիտարկումները և հնարավոր լուծումները:

Մարզի ղեկավարը հավաստիացրել է, որ երկու խնդիրների վերաբերյալ իր դիրքորոշումը միանշանակ է ու հստակ՝ խնդիրներն առկա են և այս պահին համակողմանի աշխատանքներ, քննարկումներ են իրականացվում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, «Ճանապարհային ղեկարտամենտ» ՊՈԱԿ-ի, Աբովյանի համայնքապետարանի և պատկան այլ կառույցների հետ՝ որևէ ծրագրով և բազմակողմանի համագործակցությամբ բարձրաձայնված խնդիրներին լուծումներ տալու նպատակով:

Այցի շրջանակում մարզպետը ծանոթացել է նաև Պտղնի բնակավայրում կառավարության 2022 թվականի սուբվենցիոն ծրագրով ընթացող ներհամայնքային ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներին:

Այս պահին կապիտալ ասֆալտապատվել է շուրջ 800 մետր ճանապարհահատված: Աշխատանքներն իրականացվում են պետություն- համայնք 35%-65% համաֆինանսավորմամբ:

